Հաստատում եմ

Տնօրեն Ա.Գրիգորյան

Դպրոցի տնօրենի աշխատանքային տարեկան պլան

<<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>>

ՊՈԱԿ-ի

2023—2024 ուստարվա

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքների 2023-2024 ուստարվա պլանը կազմվել է 2022-2027 թ.թ. զարգացման ծրագրի հիման վրա:Սա, ըստ էության, միջնաժամկետային / մեկ տարվա համար կազմված / զարգացման ծրագրային փաստաթուղթ է , որն հնարավորություն է ստեղծում ուժեղացնել վերահսկողությունն աշխատանքների կատարողականների վրա և կարճաժամկետ հանգամանքներում ցուցաբերել նորովի, կոնկրետ մոտեցում հրատապ հիմնախնդիրների հաշվառման և արդյունավետ լուծման համար:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կազմակերպչական բնույթի աշխատանքներ:

2. ՀՀ-ում բազմաբնույթ հիվանդությունների տարածումն կանխարգելելու ուղղությամբ ներգործուն աշխատանքների իրականացում:

3. Ուսուցման գործընթացի կազմակերպումն ու կատարելագործումը:

4. Կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան:

5. Ուսումնական աշխատանքների կառավարում և վերահսկողական գործառույթներ:

6. Մանկավարժական կադրերի հետ տարվող աշխատանքներ:

7. Տարաբնույթ աշխատանքներ աշակերտական համակազմի հետ:

8. Դպրոց –ընտանիք փոխկապակցությունը:

9. Հայրենասիրական դաստիարակություն:

10. Դպրոցի նյութատեխնիկական բազան և ֆինանսատնտեսական գործունեությունը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1.	Սահմանված կարգով կազմակերպել 1-9-րդ դասարանցիների ընդունելությունը և նրանց գործերի ձևակերպումը:	Օգոստոս Ուստարվա ընթացքում
2.	Մշտական վերահսկողություն իրականացնել աշակերտների անհարգելի բացակայությունները կանխելու ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում
3.	Ծնողների հետ համատեղ սաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով, հարստացնել գրքերով գրադարանային ֆոնդը: Կանոնակարգել գրադարանավարների աշխատանքը:	Օգոստոս Ուստարվա ընթացքում
4.	Խելամտորեն կատարել ուսուցիչների դասաբաշխումները: Նշանակել դասղեկներ և դասվարներ: Ժամանակին և խնամքով անցկացնել ուսուցիչների 2023-2024 ուստարվա տարիֆիկացիան:	Օգոստոս Սեպտեմբեր
5.	Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների ապահովում	Ուստարվա ընթացքում
6.	Հանձնարարել փոխտնօրենին ոչ ուշ, քան մինչև ս.թ. օգոստոսի 27-ը ներկայացնելու պարապմունքների դասատախտակը /հիմնական / և սաների ժամանակավոր դասամատյանները:	Օգոստոս
7.	Պահանջել տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալից մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը ներկայացնելու դասղեկների տարեկան աշխատանքային պլանները:	Սեպտեմբեր
8.	Վերանայել աշակերտական համակազմերն ըստ դասարանների: Հնարավորության դեպքում զուգահեռ դասարաններում ընդգրկել հավասար թվակազմով	

	աշակերտներ, պահպանել տղա-աղջիկ համամասնությունը:	

ՀՀ-ում բազմաբնույթ հիվանդությունների տարածումն կանխարգելելու ուղղությամբ աշխատանքների իրականացում

1.	Դպրոցի բուժկետը և մեկուսարանը համալրել անհրաժեշտ բժշկական զննման սարքավորումներով, պարագաներով և դեղամիջոցներով:	Ուստարվա ընթացքում
2.	Ամենօրյա հաշվարկ կատարել հիվանդ աշակերտների վերաբերյալ, ամեն կերպ կանխարգելել վարակի տարածումը:	Ուստարվա ընթացքում
3.	Սերտ կապ հաստատել պոլիկլինիկայի բժիշկների հետ՝ օգտակար խորհրդատվություն ստանալու նպատակով:	Ուստարվա ընթացքում
4.	Բուժքրոջ աշխատանքներն էլ ավելի օպտիմալացնելու նպատակով պահանջել աշակերտների առողջական վիճակի վերաբերյալ հաշվետվություն:	Եռամսյակը մեկ անգամ
5.	Ծայրահեղ համավարակի դեպքերում ընտրել այլընտրանքային ուսման ձևեր:	Ուստարվա ընթացքում
6.	Լրացուցիչ պարապմունքներ կազմակերպել հիվանդության պատճառով բացակայող սովորողների հետ:	Ուստարվա ընթացքում

Ուսուցման գործընթացի կազմակերպումն ու կատարելագործումը

1.	Ուսուցիչների գերխնդիրը համալրել ուսուցման արդյունավետության բարձրացումն ու կատարելագործումը, սովորողներին խորն ու կայուն գիտելիքներով զինելը:	Մշտական
2.	Ստուգել և հաստատել թեմատիկ պլաններում առարկայի նոր չափորոշչային պահանջների համապատասխանությունը,նախագծային աշխատանքները,դրանք համահունչ դարձնել նախարարության հանձնարարականներին:	Սեպտեմբեր
3.	Մասնակցել մ/մ նիստերին, լսել մ/մ նախագահների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, լայնորեն արմատավորել մանկավարժական նորությունները:	Մշտական
4.	Ապահովել ուսուցիչներին՝ 1. ուղեցույցներով 2. ծրագրերով 3. դիդակտիկ պարագաներով 4. մեթոդական ձեռնարկներով 5. մասնագիտական գրականությամբ 6. էլեկտրոնային հաշվիչ սարքերով	Մշտական
5.	Հերթական ատեստավորում անցած ուսուցիչների դասավանդման արդյունավետության մշտադիտարկում	

Ուսումնական աշխատանքների կառավարում և վերահսկողական գործառույթ

1.	Գրավոր աշխատանքերի տիպերի, քանակի և դրանց գնահատականների համապատասխանությունը չափորոշիչներին, արդյունքների քննարկում:	1-2-րդ կիսամյակ
2.	Կազմակերպել ներդպրոցական առարկայան օլիմպիադա:	2-րդ կիսամյակ
3	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՈԻՊ-ի գործողությունների քննարկում:	
4.	Հայոց,ռուսաց, անգլերեն լեզուների, մաթեմատիկայի գրավորների տիպերի, քանակի և դրանց գնահատականների հավաստիությունը ներկայիս չափորոշիչներին համապատասխան, արդյունքների քննարկումը տնօրինությանը կից խորհրդում:	1-2-րդ կիսամյակ
5.	Ուսումնասիրել բոլոր առարկաների գծով ծրագրային նյութերի կատարողական վիճակը, պարզել թերակատարումների պատճառներն և արդյունքները քննարկել մ / մ և մանկավարժական խորհրդի նիստերում:	Ապրիլ, մայիս
6.	Աշակերտների առաջադիմության արդյունքների պարբերաբար ստուգումներ, դրանց քննարկում՝ դասավանդող ուսուցչի, դասղեկի, մեթոդմիավորման նախագահների հետ:	Ուստարվա ընթացքում
7.	Կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ հոսքային առարկաներից՝ աշակերտների նախասիրությամբ,խմբակներ:	Հոկտեմբեր, մայիս

8.	Դպրոցում կազմակերպել անգլերեն լեզվի խորացված ուսուցում:	Ուստարվա ընթացքում
9.	Բարենպաստ պայմաններ ստեղծել տարբերակված (նաև ներառական) խորացված ուսուցում կազմակերպելու համար,կազմակերպել երկարօրյա ուսուցում:	Ուստարվա ընթացքում
10.	2023-2024 ուսումնական տարվա ընթացքում սովորողների՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփման, քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում և քննական հանձնաժողովների կազմի հաստատում, հաստատությունից տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման հարցի քննարկում:	հունիս

Մանկավարժական կադրերի հետ տարվող աշխատանքներ

1.	Դպրոցն ապահովել ՀՀ ԿԳ նախարարության նորմատիվ փաստաթղթերով, ուսումնական ծրագրերով ու մեթոդական այլ ձեռնարկներով:Մանկավարժներին իրազեկել նախարարության հրահանգների ու որոշումների պահանջների մասին:Խթանել և խրախուսել ուսուցիչների ստեղծագործական աշխատանքը:	Ուստարվա ընթացքում
2.	Դպրոցում ստեղծել ակտիվ նորարարական և ստեղծագործական մթնոլորտ:	Սեպտեմբեր, մայիս
3.	Տնօրինությանը կից խորհրդակցություններում լսել մեթոդմիավորումների նախագահների հաղորդումները՝ ուսուցիչներին ցույց տրվող աջակցության և վերահսկողության կազմակերպման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում
4.	Ամենամսյա սեմինար-խորհրդակցություններ մ/մ նախագահների և դասղեկների հետ:	Ուստարվա ընթացքում
5.	Մշտապես հետևել մանկավարժների ինքնաուսուցմանը և գաղափարական մակարդակի բարձրացմանը:Բազմաբնույթ աշխատանքներ ծավալել ուսուցման արդյունավետության	Ուստարվա ընթացքում

	բարձրացման ուղղությամբ:	
6.	Ուսուցիչների մանկավարժական վարպետությունն ու առարկայական պատրաստակամությունը բարձրացնելու նպատակով նրանց ընդգրկել մարզային և հանրապետական վերապատրաստման դասընթացներում:	Ուստարվա ընթացքում
7.	Ակտիվ ծնողներին դպրոցի ղեկավարման գործում ներգրավելու նպատակով՝ մասնակից դարձնել մանկավարժական խորհրդի աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում
8.	Յուրաքանչյուր ուստարի մանկավարժների 20 տոկոսի չափով ապահովել ուսուցիչների ատեստավորման գործընթացը, այն հաշվով, որ դպրոցի բոլոր մանկավարժները աստիճանաբար ատեստավորվեն, դրանով իսկ խթանվում է ուսուցիչների տարակարգեր ստանալու գործընթացը:	Ուստարվա ընթացքում

Տարաբնույթ աշխատանքներ աշակերտական համակազմի հետ

1.	Ձևավորել ուսումնական այնպիսի սոցիո-միջավայր,ուր աշակերտներն ի զորու լինի ազատորեն արտահայտել իր կարծիքը:	Ուստարվա ընթացքում
2.	Առանձնահատուկ աշխատանք միակողմանի, երկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների աշակերտների հետ:	Ուստարվա ընթացքում
3.	Հաշվառել սոցիալապես անապահով սաների քանակը,նրանց ընդգրկել <<Փարոս>> ծրագրում:	Սեպտեմբեր
4.	Համալրել դասարանների համակազմը, պարզաբանել դպրոց չհաճախող երեխաների դրդապատճառները:	Օգոստոս, սեպտմբեր
5.	Շերտավորված աշխատանք արտերկրում բնակվող ծնողների աշակերտների հետ:	Ուստարվա ընթացքում

6.	Ուշադրության կիզակետում պահել սաների իրավական դաստիարակությանը, սերտորեն համագործակցել իրավապահ կառույցների և ծնողների հետ՝ կանխել վարքագծի հանցավոր շեղումները:	Ուստարվա ընթացքում
7.	Ակտիվացնել աշակերտների՝ գեղագիտական դաստիարակության ուղղությամբ ծավալվող աշխատանքները: Ձևավորել գեղեցիկ ու նորի ճաշակ:	Ուստարվա ընթացքում
8.	Դաստիարակչական աշխատանքի պլանները կազմելիս դասղեկներին խորհուրդ է տրվում հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները:	Սեպտեմբեր
9.	Ապահովել աշակերտների ակտիվ մասնակցությունը <<Կենգուրու>>, <<Ռուսական արջուկ>>, միջազգային և <<Մեղու>> հանրապետական մրցույթներին և այլ միջոցառումներին:	Ուստարվա ընթացքում
10.	Աշակերտական ընդհանուր ժողովում ընտրել աշակերտական խորհուրդ:	Սեպտեմբեր

Դպրոց-ընտանիք փոխկապակցությունը

1.	Ամրապնդել դպրոցի և ընտանիքի կապը:Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը կրթօջախի առջև ծառայած խնդիրների լուծմանը:	Ուստարվա ընթացքում
2.	Ծնողներին ներգրավել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում
3.	Կարևորել երեխայի արժանապատվության պահպանումը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, գթասրտություն, ակնածալից վերաբերմունք ծնողների, մեծահասակների, մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ:	Ուստարվա ընթացքում
4.	Հարգալից վերաբերմունք դաստիարակել հայրենիքի, ազգային պատմամշակութային արժեքների, շրջակա միջավայրի նկատմամբ:	Ուստարվա ընթացքում

5.	<<Դժվար>> դաստիարակվող երեխաներ ունենալու դեպքում հաճախակի զրուցել ծնողների հետ և ցույց տալ մասնագիտական օգնություն:Խստորեն պահպանել մանկավարժական էթիկայի նորմերը:	Ուստարվա ընթացքում
6.	Հաճախակի կազմակերպել հանդիպում ծնողների հետ՝ լսելով նրանց մոտեցումները, խորհուրդները, դիտողությունները:	Ուստարվա ընթացքում
7.	Դաստիարակել կոռեկտ վերաբերմունք մանկավարժական հանրույթի նկատմամբ, խստորեն ենթարկվել դպրոցի ներքին կարգապահական կանոններին:	Ուստարվա ընթացքում
8.	Ծնողների հետ իրագործել համատեղ աշխատանք աշակերտների մասնագիտական կողմնորոշման համար:	Ուստարվա ընթացքում
9.	Ծնողական խորհրդի միջոցով ամրապնդել դպրոցի և համայնքի կապերը:	Ուստարվա ընթացքում

Հայրենասիրական դաստիարակություն

1.	Ուսումնական և արտադասարանական պարապմունքների ընթացքում սերտորեն զուգակցել ուսուցումն ու դաստիարակությունը:	Ուստարվա ընթացքում
2.	Մանկավարժական հանրույթի գլխավոր խնդիրը համարել ժողովրդավարության և անկախ պետականության ոգով նոր անհատի ձևավորումը:	Ուստարվա ընթացքում
3.	Հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում իրականացնել բոլոր առարկաների դասաժամերին և արտադասարանական պարապմունքների ընթացքում:	Ուստարվա ընթացքում
4.	Դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում, հատկապես <<Ձեր լռությանը ես լույս եմ	Ուստարվա ընթացքում

	պարտք>>:	
5.	Ազգային պետական խորհրդանիշների հանրահռչակման միջոցով նպաստել հայության ինքնության պահպանմանը, սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում մասնակցելու հնարավորության ընձեռմանը:	Մշտական
6.	Մշտապես կարևորել ազգային դպրոցի առաջնահերթությունը՝ ձևավորել հայրենասեր, ազգապաշտ աշակերտ-քաղաքացի:	Մշտական
7.	Ձևավորել աշակերտ-քաղաքացի՝ հայեցի և մարդասիրական դաստիարակությամբ, հայրենիքի պաշտպանությանն իր մասնակցությունն ունենալու պատրաստակամությամբ:	Մշտական

Դպրոցի նյութատեխնիկական բազան և ֆինանսատնտեսական գործունեությունը

1.	Հոգ տանել դպրոցական շենքի և գույքի պահպանությանը՝ <<Դպրոցը մեր տունն է, նրա ունեցվածքը՝ մեր սեփականությունը>> գիտակցությամբ:	Մշտական
2.	Հարստացնել նորագույն սարքավորումներով ու պարագաներով դասասենյակներն ու լաբորատորիաները:	Ուստարվա ընթացքում
3.	Գրադարանը համալրել նոր դասագրքերով, մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ:	Ուստարվա ընթացքում
4.	Բարեկարգել դպրոցի սպորտ հրապարակը, հարստացնել ժամանակակից գույքով սպորտ դահլիճները:	Մշտական

5.	Կահավորել կրթօջախի ապաստարանն անհրաժեշտ պիտույքներով:	Մշտական
6.	Բարեկարգել դպրոցական շրջակա տարածքը, խնամել ստեղծված ինտենսիվ այգին:	Մշտական
7.	Համագործակցել միջազգային դոնոր կազմակերպությունների և նրանց հայաստանյան ներկայացուցիչների հետ, փնտրել նոր հովանավորներ, բարերարներ, հիմնադրել հոգաբարձուների խորհուրդ՝ որոշ աջակցություն ակնկալելու նպատակով:	Մշտական
8.	Ֆինանսական ռեսուրսների խելամիտ օգտագործումը, նրանց վրա վերահսկողության ուժեղացումը:	Մշտական
9.	Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը թափանցիկ դարձնելու նպատակով՝ կառավարման և խորհրդակցական մարմիններում լսել տնօրենի և մյուս պատասխանատու աշխատակիցների հաշվետվությունները:	Կիսամյակի ընթացքում
10.	Ապահովել դպրոցի մասնակցությունը հայտարարված մրցույթներին և տարաբնույթ ծրագրերին:	Մշտական